Ապրիլի 8-ին Շիրակի մարզպետարանում տեղի ունեցավ մարզի խորհրդի առաջին նիստը, որը վարում էր ՀՀ Շիրակի մարզպետ Հովսեփ Սիմոնյանը: Նիստին մարզի 119 համայնքներից մասնակցում էին 114 համայնքների ղեկավարներ, մնացածները բացակայում էին հարգելի պատճառով: Մինչև նիստի սկսվելը մասնակիցները մեկ րոպե լռությամբ հարգեցին ապրիլի 1-7-ը Արցախի Հանրապետության Սահմանին դավադիր հարձակման արդյունքում զոհված Հայ զինվորների և սպաների հիշատակը: Շիրակի մարզպետը շնորհակալություն հայտնեց բոլոր այն համայնքների ղեկավարներին, ովքեր ինքնաբուխ միացել էին Արցախ ուղարկվող օգնության հավաքման գործընթացին, մնացածներին էլ տեղեկացրեց Գյումրիում բացված համակարգող գրասենյակի տեղի և գործառույթների վերաբերյալ: Ապա, ներկայացնելով մարզի խորհրդի օրակարգը, մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների 2016 թվականի առաջին եռամսյակի կատարման մասին զեկույցով հանդես եկավ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ՝ Լ. Մարտիրոսյանը: /Ստորև ներկայացնում ենք պարոն Մարտիրոսյանի զեկույցն ամբողջությամբ./

2016 թվականի ապրիլի 1-ի դրությամբ ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտները կատարվել է 86.1%-ով, նախատեսված 429,649.9 հազ. դրամ սեփական եկամուտներից ընդամենը հավաքագրվել է 369,755.6 հազ. դրամ: Սեփական եկամուտների թերակատարումը կազմում է 59,894.3 հազ. դրամ:
Մարզի համայնքների 2016 թվականի բյուջեների առաջին եռամսյակի սեփական եկամուտների կատարողականը ըստ հարկատեսակների հետևյալ պատկերն ունի.
/հազ.դրամ/

Եկամուտների անվանումը	**2016թ. նախատեսված սեփական եկամուտներ**	**Փաստացի կատարողական**	**Շեղում /+,-/**	**Կատ. %**
Հողի հարկ	76,243.6	58,983.1	- 17,260.5	77.4
Գույքահարկ	170,777.4	159,968.9	- 10,808.5	93.7
Պետական տուրք	12,344.7	10,647.8	- 1,696.9	86.3
Տեղական տուրք	31,776.5	35,159.9	- 3,383.4	110.6
Հողի և գույքի վարձակալություն, այդ թվում՝	69,081.4	52,331.2	- 16,750.2	75.8
ա/ հողի վարձավճար	58,649.9	42,929.8	- 15,720.1	73.2
բ/ գույքի վարձավճար	10,431.5	9,401.4	- 1,030.1	90.1
Այլ եկամուտներ	69,426.3	52,664.6	- 16,761.7	75.9
Ընդամենը սեփական եկամուտներ	**429,649.9**	**369,755.6**	**- 59,894.3**	**86.1**

2016 թվականի առաջին եռամսյակում փաստացի հավաքագրվածի նվազման տոկոսը 2015 թվականի առաջին եռամսյակում փաստացի հավաքագրվածի համեմատությամբ կազմում է 5.4%, կամ 2015 թվականի համեմատությամբ պակաս է հավաքագրվել 21,305.2 հազ. դրամ:

Ըստ նախկին վարչական տարածաշրջանների՝ համայնքների բյուջեներում նախատեսված սեփական եկամուտների կատարման ցուցանիշներն են.

/հազ. դրամ/

Հ/հ	Նախկին վարչական տարածաշրջանների անվանումը	2016թ. նախատեսված սեփական եկամուտներ	Փաստացի կատարողական	Շեղում /+,-/	կատ. %
1	Արթիկ	53,054.1	51,904.7	-1,149.4	97.8
2	Անի	29,521.7	24,974.3	- 4,547.4	84.6
3	Ամասիա	18,368.1	13,941.0	-4,427.1	75.9
4	Ախուրյան	71,173.5	51,152.2	-20,021.3	71.9
5	Աշոցք	21,226.2	10,064.7	-11,161.5	47.4

Մարզի նախկին վարչական տարածաշրջաններից 2016 թվականի սեփական եկամուտների հավաքագրման ամենացածր ցուցանիշը գրանցվել է Աշոցքի տարածաշրջանում՝ 47.4%, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել էր 55.7%:

Մարզի քաղաքային համայնքները 2016 թվականի սեփական եկամուտները կատարել են՝ **Գյումրի** քաղաքը՝ 92.1%, **Արթիկ** քաղաքը՝ 108.8%, **Մարալիկ** քաղաքը՝ 99.5:

ՀՀ պետական բյուջեով 2016 թվականի առաջին եռամսյակում նախատեսված 1,094,904.7 հազ. դրամ դոտացիան ամբողջությամբ ֆինանսավորվել է:

Օրակարգի 2-րդ հարցի՝ ՀՀ Շիրակի մարզում գարնան գյուղատնտեսական աշխատանքների և ոռոգման համակարգերի նախապատրաստության մասին զեկույցով հանդես եկավ *ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Մովսես Մանուկյանը:*

2016 թվականին մարզի շուրջ 29000 գյուղացիական, ֆերմերային տնտեսություններում գյուղատնտեսական մշակաբույսերի կանխատեսվող ցանքատարածությունները նախորդ տարվա համեմատությամբ ունեն հետևյալ տեսքը.

Հ/Հ	Մշակաբույսի անվանումը	Ցանքատարածություն /հա/		Աճ կամ նվազում /հա/
		2015թ.	2016թ. կանխատեսվող	
1	Հացահատիկ	46665	48476	**+1811**
	այդ թվում՝ աշնանացան ցորեն	26436	27343 (փաստացի)	**+907**
	գարնանացան գարի	20229	21133	**+904**
2	Կարտոֆիլ	4384	4583	**+199**
3	Բանջարեղեն	1729	1900	**+171**
4	Կերային մշակաբույսեր	14532	14833	**+301**

5	Տեխնիկական մշակաբույսեր	91	110	**+19**
Ընդամենը		**67401**	**69902**	**+2501**

2016 թվականի գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները կավելանա շուրջ **2501** հա-ով:

Աշնանացան ցորենի սերմարտադրության ծրագիր

2016 թվականի բերքի տակ ցանվել է **27343** հա աշնանացան ցորեն, նախորդ տարվա **26436** հա-ի դիմաց՝ աճ **907** հա: Ցանքատարածությունների աճին նպաստեց 2015թ. աշնանը իրականացված «Հայաստանի Հանրապետությունում 2015-2018 թվականներին ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագիրը», որի շրջանակներում մարզում ցանվեցին **4100** հա առաջին վերարտադրության ցորենի ցանքեր: Սերմնաբուծության ծրագրով մարզում կատարվեցին աշնանացան ցորենի բարձրորակ ցանքեր՝

Սուպեր էլիտային վերարտադրություն	24 տ	9 շահառու	96 հա
Առաջին վերարտադրության	1230 տ	64 համայնք	4100 հա

Որոշ համայնքների կողմից կան թերացումներ **2012-2013թթ.** և **2013-2014թթ.** առաջին վերարտադրության ցորենի սերմացուի գումարների հավաքագրման ուղղությամբ: 2012-2013թթ. համայնքների կողմից չի հավաքագրվել շուրջ **9 մլն դրամ** և 2013-2014թթ. **54 մլն դրամ /Զույգաղբյուր, Ողջի, Մարմաշեն, Իսահակյան, Լուսաղբյուր, Սարակապ, Աղին, Հայկաձոր/**:

2016 թվականին գյուղատնտեսության ոլորտում իրականացվող աջակցության ծրագրեր

1) **Գարնանացանի աջակցության ծրագիր**

2016 թվականի գարնանացանի համար Շիրակի մարզի համայնքների կողմից գնվել է՝

Սերմացու	**Հատկացվել է**	**Իրացվել է**
Գարնանացան գարի	367.8 տ	367.8 տ – 1 կգ 130 դրամ
Կորնգան	80 տ	80 տ – 1կգ 370 դրամ
Առվույտ	5 տ	1.3 տ – 1կգ 1500 դրամ

Պարարտանյութերի և դիզելային վառելանյութի աջակցության ծրագրեր

2016թ. գյուղատնտեսական տարվա համար մարզի համայնքներին հատկացվել է՝

	Հատկացվել է	**Իրացվել է**
Ազոտական պարարտանյութ	5690 տ	2025 տ – 1 պարկը 6000 դրամ
Ֆոսֆորական պարարտանյութ	63 տ	7 տ – 1 պարկը 7000 դրամ
Կալիումական պարարտանյութ	60 տ	3 տ – 1 պարկը 7000 դրամ

Դիզելային վառելանյութ	1 120 000 լիտր	313 000 լիտր – 1 լիտրը 280 դրամ

Ոռոգում

Ջրամբարների լցվածությունը 07.04.2016թ. դրությամբ

Հ/հ	Ջրամբարի անվանումը	Ծավալը /մլն մ³/	Լցվածությունը առ 07.04.2015թ. /մլն մ³/	Լցվածությունը առ 07.04.2016թ. /մլն մ³/	Աճ/նվազում (+/-) /մլն մ³/
1	Ախուրյան	525	246.76	425.54	+178.78
2	Արփի լիճ	105	14.7	25.7	+11
3	Կառնուտ	22.6	5.32	8.67	+3.35
4	Սառնաղբյուր	4.8	0.3	0.31	+0.01
5	Վարդաքար	5	0.91	1.47	+0.56
6	Թավշուտ	6	0.61	0.53	-0.08
7	Մանթաշ	8.2	0.71	0.98	+0.27
8	Ջաջուռ	0.28	0.18	0.19	+0.01
Ընդամենը		151.88	22.73	37.85	+15.12

Լցվածության հանրագումարը հաշվարկված է առանց Ախուրյանի ջրամբարի:

«Շիրակի» ՋՕԸ-ի կողմից 2016 թվականին պլանավորվել է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

Հ/հ	Միջոցառումների անվանումը	Չափի միավոր	Ընդամենը	*այդ թվում*	
				միջտնտեսային համակարգ	ներտնտեսային համակարգ
1	Ոռոգման ցանցի մաքրում	հազ. խ.մ. հազ. դրամ	36,573 26390,7	9,129 8064	27,444 18326,7
	այդ թվում				
	ձեռքով	հազ. խ.մ. հազ. դրամ	6,005 7918,5	3,451 4189,6	2,554 3728,9
	մեխանիզմով	հազ. խ.մ. հազ. դրամ	13,3 18472,2	13,3 3874,4	23,8 14597,8
2	Ոռոգման ցանցի նորոգում	կմ հազ. դրամ	20,5 4693,5	13,8 3257,5	6,7 1436
3	Հիդրոտեխնիկական կառուցվածքների և ջրաչափական դիտակետերի նորոգում	հատ հազ. դրամ	138 5631,3	72 4198,3	66 1433

4	Պոմպակայանների և խորքային հորերի նորոգում	հատ հազ. դրամ	13 3284,6	-	13 3284,6
5	Մեքենա-մեխանիզմների նորոգում	հատ հազ. դրամ	15 7500	-	-
6	Վթարային նորոգում	հազ. դրամ	2000	-	-
Ընդամենը		**հազ. դրամ**	**49500,1**	**15519,8**	**24480,3**

Միջտնտեսային նշանակության համակարգի վրա 2016թ. կատարվելիք գարնան նախապատրաստական աշխատանքներ

Համակարգի անվանումը	**Մաքրում՝ ընդամենը**		**Ցանցի նորոգում**		**ՀՏԿ-ների և ջրաչափական կետերի նորոգում**		**Պոմպակայանների և խ/հ նորոգում**	
	կմ/հազ.խ/մ	հազ.դրամ	կմ	հազ.դրամ	հատ	հազ.դրամ	հատ	հազ.դրամ
Աջափնյա ջրանցք	4.5 / 0.32	335,4	-	-	50	3200	-	-
Շիրակի ջրանցք	5,3 / 0,3	1120	2	350	6	503,4	-	-
Այգաբացի ջրանցք	7 / 0,23	400	4	1500	-	-	-	-
Բ-26	18 / 1,07	1150	2	400	-	-	-	-
Բ-14	1.5 / 0.48	478,1	2,3	150	-	-	-	-
Բ-16	0,8 / 0.075	219	1,5	237,5	-	-	-	-
Բ-18	3,5 / 0,12	125,8	-	-	-	-	-	-
Բ-7	1.5 / 0.085	80,1	-	-	-	-	-	-
Բ-19	4 / 0.445	480,8	-	-	-	-	-	-
Բ-23	8 / 0,26	480	-	-	-	-	-	-
Բ-25	10 / 0.58	573,9	2	620	-	-	-	-
Կապսի ջրանցք	12 / 1,25	1220	-	-	-	-	-	-
Ղարանղուլի աջափնյա ջրանցք	11 / 0.78	782,5	-	-	6	318,9	-	-
Ղարանղուլի ձախափնյա ջրանցք	3.2 / 0.25	262	-	-	4	93,2	-	-

Հոռոմի ջրանցք	2.1 / 0.506	356,4	-	-	6	82,8	-	-
Ընդամենը	**92,4 / 6,751**	**8064**	**13,8**	**3257,5**	**72**	**4198,3**	**0**	**0**

Շիրակի մարզում «Շիրակ» ՋՕԸ-ի կողմից 2016թ. կատարվելիք գարնան նախապատրաստական աշխատանքներ՝ ըստ տեղամասերի

Հ/հ	Համայնքի անվանումը	Մաքրում՝ ընդամենը		Ցանցի նորոգում		ՀՏԿ-ների և ջրաչափական կետերի նորոգում		Պոմպակայան-ներ և խ/հ	
		կմ/հազ.խ/մ	հազ. դրամ	կմ	հազ. դրամ	հատ	հազ. դրամ	հատ	հազ. դրամ
1	Հայկավան	10 / 0,38	487,4	-	-	-	-	-	-
2	Առափի	8,2 / 0,75	544,9	-	-	-	-	-	-
3	Ոսկեհասկ	7 / 0,63	454,9	-	-	-	-	-	-
4	Ողջի	7 / 0,7	358,7	-	-	-	-	-	-
5	Կապս	-	0	-	-	-	-	-	-
6	Վահրամաբերդ	9,5 / 0,96	697,7	-	-	4	89	-	-
7	Մարմաշեն	15 / 1,875	798,2	1,1	560	-	-	-	-
8	Հովունի	11,5 / 1,54	282,7	-	-	-	-	-	-
9	Մասիսյան	19 / 1,55	660,7	-	-	4	119	-	-
10	Հացիկ	69 / 2,73	1824,6	-	-	-	-	-	-
11	Ախուրյան	17,5 / 1,829	1474,6	-	-	25	500	-	-
12	Ազատան	45 / 4,2	3243,3	-	-	15	315	-	-
13	Արևիկ	19,2 / 1,63	621,4	-	-	-	-	1	207,7
14	Կառնուտ	19 / 1,86	1638,8	-	-	4	70	-	-
15	Բենիամին	3 / 0,13	300	-	-	-	-	1	192,7
16	Մեղրաշեն	1,5 / 0,4	373,8	-	-	-	-	-	-
17	Ախուրիկ	2,5 / 0,2	290	1,5	450,3	-	-	3	589
18	Այգաբաց	10 / 0,8	533,5	-	-	-	-	-	-
19	Կամո	23 / 2,2	2063,1	4,1	425,7	-	-	1	203,6
20	Շիրակ	13 / 1,26	957,2	-	-	14	340	-	-
21	Մելեկցիոն կայան	5 / 0,73	721,1	-	-	-	-	-	-
22	Բայանդուր	-	-	-	-	-	-	2	524
23	Նոր Կյանք	-	-	-	-	-	-	1	214,7
24	Վարդաքարի	-	-	-	-	-	-	1	106,5

25	Ջրափի	-	-	-	-	-	-	2	770
26	Արևշատ	-	-	-	-	-	-	1	476,4
Ընդամենը		314,9 / 2,354	18326,7	6,7	1436	66	1433	13	3284,6

Եվ օրակարգի վերջին հարցի՝ ՀՀ Շիրակի մարզում գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման և վերացման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների մասին *զեկույցով հանդես եկավ ՀՀ* Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ՝ Արամ Անտոնյանը:

Շիրակի մարզը համարվում է աղետավտանգ տարածաշրջան, որին բնորոշ են տարերային բնույթի մի շարք վտանգավոր երևույթներ: Դրանցից են նաև գարնանային վարարումները և սելավները, որոնք կարող են առաջացնել արտակարգ իրավիճակներ՝ պատճառելով խոշոր նյութական վնասներ:

Գրեթե յուրաքանչյուր տարի տարերային բնույթի արտակարգ իրավիճակների հետևանքով Շիրակի մարզին հասցվում են բավականին խոշոր չափի նյութական վնասներ, որոնցից հեղեղումների և սելավների պատճառած վնասը կազմում է 20-ից 30-%:

Հեղեղումների հիմնական պատճառ են հանդիսանում գարնանը ջերմաստիճանի կտրուկ բարձրացումը և հորդառատ անձրևները: Շատ հաճախ համայնքներում հեղեղումների պատճառ է հանդիսանում նաև կենցաղային աղբը, որը բնակիչների կողմից լցվում է սելավատարները և ժամանակին չի մաքրվում:

Շիրակի մարզի տարածքում առավել հեղեղավտանգ տարածքներ են համարվում Ղորղոբա, Ղարանղու, Աշոցք, Ախուրյան գետերը, Գյումրի-Չայ գետակը, Մարալիկի, Ջաջուռի, Ողջիի, Մարմաշեն-Հովունիի, Կամո-Կառնուտի, Արթիկ քաղաքի Բմբուլենց ու Մովրովենց հեղեղատարները:

Ընթացիկ տարում, ըստ մարզի հեղեղավտանգ հատվածներ ունեցող համայնքների ղեկավարների կողմից ներկայացված տեղեկատվության՝ նախատեսվում է իրականացնել մոտ 7 կմ վտանգավոր հատվածների (գետերի հուների, ջրանցքների, հեղեղատարների) մաքրում: Այդ նպատակով համայնքային բյուջեներից նախատեսվում է ծախսել մոտ 8,5 մլն. դրամ: Մասնավորապես՝ աշխատանքներ են իրականացվելու Գյումրի, Արթիկ, Մարալիկ քաղաքային և Ախուրյան, Ամասիա, Աշոցք, Ազատան, Առափի, Փանիկ, Արևշատ, Նոր Կյանք, Ջաջուռ, Ջրաձոր, Լուսակերտ, Ողջի, Գետափ, Անուշավան գյուղական համայնքներում:

Հեղեղավտանգ ժամանակահատվածում կանխարգելիչ միջոցառումների կանոնակարգված կազմակերպման նպատակով յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից ընդունվում է համապատասխան որոշում՝ (որոշումը ուղարկվում է բոլոր համայնքներին) Շիրակի մարզի տարածքում գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների մասին: Տրվում են հստակ հանձնարարականներ մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին, արվում առաջարկություններ շահագրգիռ կազմակերպությունների և համայնքների ղեկավարներին՝ իրականացնելու բոլոր անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումները սելավատարների առավել վտանգավոր տեղամասերում հուների մաքրման և ափերի բարձրացման ուղղությամբ, հեղեղավտանգ ժամանակահատվածում ուժեղացնելու հսկողությունը մարզի տարածքում գտնվող ջրամբարների և ջրանցքների հիդրոլոգիական ռեժիմների նկատմամբ:

Չնայած, որ անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու նպատակով սույն թվականի մարտի 30-ին համայնքներ է ուղարկվել շրջաբերական գրություն և հեղեղումների դեպքում բնակչության կողմից իրականացվելիք անհրաժեշտ քայլերի հուշաթերթ, սակայն հարկ ենք համարում ևս մեկ անգամ համայնքների ղեկավարներին տեղեկացնել, որ անհրաժեշտ է.

- ✓ պատրաստի վիճակի բերել համայնքային քաղաքացիական պաշտպանության կազմավորումները, արագ արձագանքման խմբերն ու ինժեներական տեխնիկան, ինչպես նաև ունենալ պահուստային վառելիք՝ կանխարգելիչ միջոցառումների իրականացման նպատակով,
- ✓ համայնքապետարաններում սահմանել հերթապահություն, սպասվող հնարավոր հեղեղումների և ձեռնարկվելիք առաջնահերթ քայլերի մասին իրազեկել համայնքի բնակչությանը,
- ✓ մշտապես հետևել համայքների սելավատարների մաքրությանը, թույլ չտալ բնակչությանը կենցաղային աղբ լցնել սելավատարների մեջ,
- ✓ կազմել համայնքի տարածքում գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների ծրագիր և ապահովել նախատեսված միջոցառումների ժամանակին կատարումը:

Տեղեկացնում ենք, որ մարզպետարանի, ՇՄՓՎ կողմից հեղեղավտանգ ժամանակահատվածում մարզային զանգվածային լրատվամիջոցներով պարբերաբար իրականացվելու է իրազեկում բնակչությանը սպառնացող հնարավոր վտանգների և ձեռնարկվելիք միջոցառումների մասին: Համայնքների ղեկավարներին առաջարկվում է այդ ժամանակահատվածում մշտական կապի մեջ լինել մարզպետարանի համապատասխան պատասխանատուների և մարզային փրկարարական վարչության հետ: